ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
10 սեպտեմբերի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 57 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Լևոն Հովհաննիսյանը, Սուրեն Գրիգորյանը, Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Աշոտ Շահբազյանը, Կամո Արեյանը և Սոնա Թևանյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար, վարչության պետի տեղակալ Վիգեն Եղիազարյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը, քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետի պաշտոնակատար Ալիկ Վարդազարյանը, հասարակական կարգի պահպանության ծառայության պետ Արամ Գյուլզադյանը, «Երևաննախագիծ» ՓԲ ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը և «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի տնօրեն Հրաչյա Նազարյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2024 թվականի հոկտեմբերի 15-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Առաջարկն ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Երևանի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հերթական նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Գրիգորի Երիցյանը և առաջարկեց նիստի օրակարգում ընդգրկված զեկուցվող՝ «Գրիգորի Երիցյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» հարցը հանել օրակարգից:

Ներկայացված առաջարկությունը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 25, դեմ՝ 33, ձեռնպահ՝ 0

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հերթական նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և խմբակցության անդամ Արմենակ Դանիելյանը՝ տեղեկացնելով, որ լրամշակելու անհրաժեշտությամբ պայմանավորված օրակարգի նախագծից հանվում է Արմենակ Դանիելյանի կողմից ներկայացված՝ ««Երևանի հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» 37-րդ հարցը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի օրակարգը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքում Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի անվամբ պուրակ անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
3. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)
4. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
5. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
6. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
7. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
8. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
9. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
10. Նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
11. Նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

12. Նուբարաշենի խճուղու հարևանությամբ անտառաշերտի ստեղծման 2025 թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
13. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի N 119-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
14. Երևան քաղաքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին: (Զեկուցվող)
16. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
17. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 44-Ն և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N45-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
18. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
19. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
21. «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին: (Զեկուցվող)
22. «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի մինչև 2030 թվականի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին: (Զեկուցվող)
25. Գրիգորի Երիցյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին: (Զեկուցվող)
26. Անույշ Խուդավերդյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին: (Զեկուցվող)
27. Անուշ Գինոսյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին: (Զեկուցվող)
28. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
29. Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան

քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին: (Զեկուցվող)

30. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
31. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
32. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)
33. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)
34. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
35. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
36. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
37. «Երևանի հ.156 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն առաջարկեց Երևանի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հերթական նիստի օրակարգի նախագծից հանել 26-րդ՝ «Անույշ Խուդավերդյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» և 27-րդ՝ «Անուշ Գինոսյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» հարցերը:

Ներկայացված առաջարկությունը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 25, դեմ՝ 34, ձեռնպահ՝ 0

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ օրակարգի նախագծի 7-րդ՝ «Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» (Նոր Նորք վարչական շրջան, Մոլդովական փ.27/6 հասցե), 9-րդ՝ «Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» (Սպանդարյանի բազալտի և տուֆերի հանքավայր) և 13-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի N119-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծերի վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, վերոնշյալ իրավական ակտերի նախագծերը հանվում է քննարկումից:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքում Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի անվամբ պուրակ անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)

3. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)
4. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
5. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
6. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
7. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
8. Նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
9. Նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
10. Նուբարաշենի խճուղու հարևանությամբ անտառաշերտի ստեղծման 2025 թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
11. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին: (Զեկուցվող)
12. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
13. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 44-Ն և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N45-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
14. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
15. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
16. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
17. «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին: (Զեկուցվող)
18. «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
19. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
20. Երևան քաղաքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
21. Գրիգորի Երիցյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին: (Զեկուցվող)

22. Անուշ Գինոսյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին: (Զեկուցվող)
23. Անույշ Խուդավերդյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին: (Զեկուցվող)
25. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
26. Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվակնաի մարտի 12-ի N95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին: (Զեկուցվող)
27. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
28. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
29. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)
30. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)
31. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
32. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
33. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 13, ձեռնպահ՝ 10

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշման 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 20-րդ հարցերը:

Տ. Ավինյանը տեղեկացրեց, որ վերոնշյալ 2-20-րդ չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրվել են դրական եզրակացություններ:

2. Երևան քաղաքում Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի անվամբ պուրակ անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Երևանի կինոյի տան /Վարդանանց փող.,18շ./ դիմացի պուրակն անվանակոչել Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի անվամբ՝ «Նռան գույնը» պուրակ:

3. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի «Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում» ծրագրով ձեռք բերված 17,520,000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր քսան հազար դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թվով 2 վերելակները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի «Ավան» առողջության կենտրոն» ՓԲ ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի «Ավան» առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

4.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց h.28 հասցեում վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտահանում, մշակում (բացառությամբ կոշտ կենցաղային, էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների, շինարարական թափոնների տեսակավորման կամ մեխանիկական եղանակով տարանջատման), վերամշակում, վնասազերծում, տեղադրում կամ թաղում նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

5.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների փողոց h.23 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

6.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հ. Էմինի փողոց 1-ին նրբանցք հ. 23, 23/1, 25, 27 և 29 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

7.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արցախի պողոտա 4-րդ նրբանցք հ.12 հասցեում թափառող կենդանիների կացարանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

8. Նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման և ջարդիչ կայանի տեղադրման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում են տնտեսական կամ այլ գործունեության իրականացումը, ինչպես նաև նման գործունեություն իրականացնող օբյեկտների նախագծումն ու կառուցումը, եթե դրանք կարող են հանգեցնել մարդու առողջության վատթարացման, բույսերի և կենդանիների գենետիկ ֆոնդի ոչնչացման, մարդու և շրջակա բնական միջավայրի համար անդառնալի հետևանքների: Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի 120-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ բետոնի արտադրության գործարանը դասակարգվում է չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ շարքին: Նույն հրամանով հաստատված նորմերի 116-րդ կետի 4-րդ

ենթակետի համաձայն՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ներգործության աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական, արտադրական օբյեկտների շենքերի և շինությունների համար՝ կախված հզորությունից, շահագործման պայմաններից, շրջակա միջավայր արտանետվող աղտոտիչների բնույթից և քանակից, առաջացող աղմուկից, թրթռումից և այլ վնասակար ֆիզիկական գործոններից, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումներից, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա դրանց անբարենպաստ ազդեցությունը նվազեցնելու անհրաժեշտությունը, արդյունաբերական, արտադրական օբյեկտների սանիտարական դասակարգմանը համապատասխան, սահմանվում են սանիտարապաշտպանական գոտիների հետևյալ կողմնորոշիչ չափերը՝ (...) 4) չորրորդ (IV) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ՝ 100 մ: Տվյալ նախատեսվող գործունեության դեպքում սանիտարապաշտպանական գոտու չափը չի պահպանվում, քանի որ մոտակա բնակելի շինությունը գտնվում է 93,7 մետր հեռավորության վրա:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

9. Նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց հ.8, Հանրապետության փողոց հ.83 և 83/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N04-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի (այսուհետ՝ նորմեր) 230-րդ կետի համաձայն՝ բնակավայրերում անհրաժեշտ է նախատեսել չընդհատվող (անընդհատ) լանդշաֆտառեկրեացիոն տարածքների համակարգ, որը պետք է ձևավորվի որպես ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտիների և բնական ռեկրեացիոն համալիրների հետ փոխկապակցված բաց տարածությունների ամբողջություն, որտեղ ներառվում են քաղաքային անտառապուրակների, զբոսայգիների, լայն ծառուղիների, ճեմելիքների (բուլվարների, ճեմուղիների), պուրակների և դրանց սահմաններում գտնվող լճակների, ջրամբարների, լողափերով զբաղեցված տարածքները, բնակավայրերի անտառները, անտառապուրակները, անտառապաշտպան գոտիները, ջրամբարները, գյուղատնտեսական հողերը և այն հանդակները, ինչպես նաև տարածքները, որոնք օգտագործվում են հանգստի, զբոսաշրջության, ֆիզիկական դաստիարակությամբ և սպորտով զբաղվելու նպատակներով՝ սույն նորմերի և ՀՀ կառավարության 2018

թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան: Նույն հրամանով հաստատված նորմերի 231-րդ կետի համաձայն՝ տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40%-ից ոչ պակաս, իսկ բնակելի (բնակեցման) տարածքի սահմաններում՝ 25%-ից ոչ պակաս: Նշված պահանջը տվյալ նախատեսվող գործունեության դեպքում չի պահպանվում, քանի որ նախատեսվող կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 5,6 տոկոս:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

10. Նուբարաշենի խճուղու հարևանությամբ անտառաշերտի ստեղծման 2025 թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ–1.Հաստատել Նուբարաշենի խճուղու հարևանությամբ անտառաշերտի ստեղծման 2025 թվականի բնապահպանական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. 2025 թվականի բյուջետային գործընթացով սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը և դրա գծով Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների գումարը ստանալու հայտը ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն:

11. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 48-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN1-5 հավելվածների:

12. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 48-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

13. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 44-Ն և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N45-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 44-Ն որոշման 1.1-ին կետում «հաստատությունների» բառից հետո լրացնել «, Երևանի վարչական տարածքում պետական ենթակայությամբ գործող սոցիալական պաշտպանության կազմակերպությունների» բառերը:

2. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան համայնքում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 45-Ն որոշման 1-ին կետի 10.4-րդ ենթակետից հետո լրացնել նոր 10.5-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.5) Երևանի վարչական տարածքում պետական ենթակայությամբ գործող սոցիալական պաշտպանության կազմակերպությունների շենքերի և շինությունների համար՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար 2024 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.»:

14. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 44-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում, որոնց պարագայում յուրաքանչյուր փոփոխության արդյունքում ընդհանուր միասին գումարային արտահայտությամբ վերցված փոփոխվող մակերեսի ընդհանուր չափը չի գերազանցում մինչև առաջին և յուրաքանչյուր հաջորդական փոփոխությունների կատարումը նախագծային փաստաթղթերով հաստատված մակերեսի մեկ տոկոսը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս շինարարության թույլտվության՝ 2024 թվականի համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:».

2) Որոշման 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում մակերեսի ավելացում նախատեսող փոփոխություններ կատարելու դեպքում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում սույն որոշման 3-րդ կետով նախատեսված չափից ավելի մակերեսի ավելացում նախատեսող փոփոխություններ կատարելու դեպքում» բառերով.:

15. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Հասարակական կարգի պահպանության ծառայություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Հասարակական կարգի պահպանության ծառայություն				
1	ծառայության պետ	1	697,000		697,000
2	ծառայության պետի տեղակալ	3	561,000		1,683,000
3	գործավար	1	248,200		248,200
-	**Տարածքային առաջին բաժին**				
4	բաժնի պետ	1	408,000		408,000
5	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
6	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
7	առաջին կարգի մասնագետ	6	278,800		1,672,800

-	**Տարածքային երկրորդ բաժին**				
8	բաժնի պետ	1	408,000		408,000
9	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
10	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
11	առաջին կարգի մասնագետ	6	278,800		1,672,800
-	**Տարածքային երրորդ բաժին**				
12	բաժնի պետ	1	408,000		408,000
13	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
14	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
15	առաջին կարգի մասնագետ	6	278,800		1,672,800
-	**Տարածքային չորրորդ բաժին**				
16	բաժնի պետ	1	408,000		408,000
17	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
18	առաջատար մասնագետ	6	292,400		1,754,400
19	առաջին կարգի մասնագետ	6	278,800		1,672,800
	ԸՆԴԱՄԵՆԸ	**70**			**21,987,800**

2) «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1508» և «423,660,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «1528» և «429,637,200» թվերով:

3) «Ամբողջը» տողում «2272» և «678,527,045» թվերը փոխարինել «2292» և «684,504,245» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

16. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Շինարարության և բարեկարգման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Շինարարության և բարեկարգման վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	3	561,000		1,683,000
3	գործավար	1	248,200		248,200
-	**Շինարարական ծրագրերի կառավարման բաժին**				
4	բաժնի պետ	1	408,000		408,000
5	գլխավոր մասնագետ	3	289,000		867,000
6	առաջատար մասնագետ	3	282,200		846,600
-	**Շինարարական աշխատանքների պայմանագրերի կառավարման և վերլուծությունների բաժին**				
7	բաժնի պետ	1	408,000		408,000
8	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
9	առաջատար մասնագետ	2	282,200		564,400

10	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	**Ճանապարհային շահագործման և սպասարկման բաժին**				
11	բաժնի պետ	1	408,000		408,000
12	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
13	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
14	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	**Շինարարական օբյեկտների ծրագիր**				
15	ծրագրի ղեկավար	1	474,000		474,000
16	պատասխանատու ինժեներ	7	408,000		2,856,000
-	**Ճանապարհների միջին նորոգման և հիմնանորոգման ծրագիր**				
17	ծրագրի ղեկավար	1	474,000		474,000
18	պատասխանատու ինժեներ	8	408,000		3,264,000
	Շինարարական ծրագրերի մոնիտորինգի և վերլուծությունների խումբ				
19	մասնագետ	3	408,000		1,224,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**43**			**16,404,400**

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «764», «254,867,045» թվերը փոխարինել համապատասխանաբար «775», «259,270,045» թվերով:

3) «Ամբողջը» տողում «2292», «684,504,245» թվերը փոխարինել «2303», «688,907,245» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ ծրագրերի հաստիքների:

17. «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերությունը /գտնվելու վայրը՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Փ.Բուզանդի 1/3, գրանցման համարը՝ 286.120.03280/:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով:

18. «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

19. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 12-րդ ենթակետի՝

